ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱՀՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԲԱՌԱՐԱՆ

ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱՀՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

«Հեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:

Ա

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼ — Դատարանի որոշմամբ անձին փակ հաստատությունում տեղավորելը, պահելը, հաստատությունը՝ առանց իրավասու մարմնի թույլտվության լքելն արգելելն է:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ — Ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակներ են (օրինակ՝ տուգանք, հանրային աշխատանքներ) կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցներ (օրինակ՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ) կամ արձագանքման այլ միջոցներ (օրինակ՝ մեդիացիա կիրառելը, պատիժը պայմանականորեն չկիրառելը և փորձաշրջան սահմանելը):

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ (DIVERSION) — Հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի վերաբերյալ գործերի քննությունն է առանց դատաքննության դիմելու:

ԱՆՀԱՊԱՂ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ — Օրենսդրական (ապացուցման) կանոն է կամ որոշակիորեն ձևավորված պրակտիկա առ այն, թե ինչ ժամկետում պետք է տուժողը հաղորդում ներկայացնի սեռական բռնության զոհ դառնալու մասին:

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ — Մասնագիտացված դատական մարմինների ձևավորումը և անչափահասին մեղ-

սագրվող հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության հատուկ ընթացակարգի ապահովումն է:

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԿՈՒՆ ՄՈԴԵԼ — Արդարադատական մոդել է, որի շրջանակում օրենսդրական մակարդակով և գործնականում հնարավոր է անչափահաս մեղադրյալների վերաբերյալ քրեական գործերի փոխանցումը չափահասների արդարադատության համակարգ:

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԻՍՏ ՄՈԴԵԼ — Արդարադատական մոդել է, որը ենթադրում է անչափահասների արդարադատության համակարգի գործողության համար տարիքային սահմանափակման առավելագույն շեմի ամրագրում և բացառում է որևէ դեպքում նշված տարիքային սահմանից ներքև երեխաների և երիտասարդների քրեական հետապնդումը չափահասների արդարադատության համակարգի շրջանակում:

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ — Երեխայի անվտանգության ապահովումը և կարիքների (առաջնահերթ կամ հատուկ) բավարարումն է:

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԱՌԱՐԿԱ — Ի լրումն ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածով նախատեսված հանգամանքների, ապացուցման ենթակա առանձնահատուկ հանգամանքներ են՝ անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով:

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԿԱՐԻՔՆԵՐ — Երեխայի կյանքի ու բնականոն զարգացման համար անհրաժեշտ կենսաֆիզիոլոգիական, սոցիալական պահանջմունքներն են, որոնց թվին են դասվում՝ ֆիզիոլոգիական կարիքները (առողջ սնունդ, ջուր, քուն, կացարան, մարդկային վերաբերմունք), անվտանգության և անձեռնմխելիության հետ առնչվող կարիքները (վտանգներից, բռնությունից և անտեսումից պաշտպանված լինելը, ֆինանսական անվտանգությունը, առողջապահական ծառայությունը-

ների հասանելիությունը), սոցիալական կարիքները (սիրված, ընդունված լինելու, տարեկիցների հետ շփվելու), արժանապատվության, հարգված լինելու կարիքը (քաջալերումը, հավանության արժանանալը, ծնողների, ընկերների, ուսուցիչների կողմից հարգանքի արժանանալը), ինքնադրսևորումը (նախասիրություններ, ստեղծագործել):

ԱՆՁԱՓԱՀԱՍԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ — Երեխայի կյանքի ու բնականոն զարգացման համար անհրաժեշտ կենսաֆիզիոլոգիական, սոցիալական պահանջմունքներն են, որոնց գոյությունը պայմանավորված է երեխայի «ինչ-որ բան» անելու, օրինակ, հիվանդություններով պայմանավորված՝ որոշակի տեսակի սնունդ կամ ըմպելիք օգտագործելու, ֆիզիկական վիճակով պայմանավորված՝ ազատ տեղաշարժվելու, սոցիալիզացիայի խնդիրներով պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատություն հաճախելու, հոգեբանական խնդիրներով պայմանավորված՝ փակ տարածությունում գտնվելու անկարողությամբ:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ — Պետական հարկադրանքով ապահովված քրեաիրավական ներգործության միջոց է, որը դատարանի դատավճռով կամ որոշմամբ պետության անունից նշանակվում է պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

Բ

ԲՌՆՈՒԹՅՈՒՆ — Այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով՝ դիտավորյալ ֆիզիկական կամ հոգեբանական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական կամ հոգեբանական վնաս պատճառելն է:

Գ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ — Բռնություն, որը վերաբերում է անձին ուղղված վնասակար գործողություններին՝ ելնելով նրանց սեռից: Դրա հիմքում ընկած է գենդերային անհավասարությունը, իշխանության չարաշահումը և վնասող նորմերը:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊ — Ընդհանրացված կամ կանխակալ կարծիք է երկու սեռերի ներկայացուցիչների անձնային կամ վարքագծային հատկանիշների մասին:

ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏ — Սեռական և ընտանիքում բռնության դեպքերով գործի՝ հնարավորինս սեղմ ժամկետներում քննության պահանջն է՝ տուժողների համար համարժեք և անհետաձգելի պաշտպանություն ապահովելու համար:

Դ

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ — Ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմին է դիտարկվում ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայությունը՝ իր ենթակայությամբ գործող քրեակատարողական հիմնարկների միջոցով, իսկ ազատազրկման հետ չկապված պատիժների համար դատապարտված, ինչպես նաև պատժից պայմանական ազատված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին է հանդիսանում ՀՀ Պրոբացիայի ծառայությունը:

Ե

ԵՐԵԽԱՅԱՄԵՏ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ — Արդարադատության իրականացման մոտեցում է՝ հիմնված երեխայի տարիքային առանձնահատկությունները և կարիքները հաշվի առնելու և ըստ այդմ՝ համաչափ արձագանքելու, յուրաքանչյուր երեխայի հանդեպ անհատական մոտեցում ցուցաբերելու, երեխային պիտակավորումից (ստիգմատիզացիայից) զերծ պահելու սկզբունքների վրա: Երեխայամետ արդարադատությանը բնորոշ հատկանիշներ են՝ երեխայի տարիքով պայմանավորված առանձնահատկություններին հարմարեցված լինելը, երեխայի կարիքներին առաջնահերթություն տալը, երեխայի համար մատչելի, հասանելի լինելը, գործերի արագ քննությունը, այս կամ այն որոշման՝ երեխայի համար հնարավոր բացասական հետևանքները կանխատեսելը, երեխայի իրավունքները, այդ թվում՝ գործի քննությանը մասնակցելու, լսված լինելու, սեփական դիրքորոշումները, ցանկություններն արտահայտելու, անձնական և ընտանեկան կյանքի, անձնական անձեռնմխելիության և արժանապատվության իրավունքները երաշխավորելը:

ԵՐԵԽԱՅԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ — Երեխայի ֆիզիկական, բարոյական և հոգեկան վիճակի բնութագիր է, որը ենթադրում է, որ երեխան ունակ է առօրյա ֆիզիկական ակտիվության, ուսման, ինչպես նաև գտնվում է կայուն դրական-հուզական վիճակում, ինչն էլ հնարավոր է նրա տարիքով պայմանավորված կարիքների բավարարման պարագայում:

ԵՐԵԽԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀ — Երեխայի իրավունքների երաշխավորման սկզբունք է, որի առանցքում նրա բարեկեցության ապահովումն է՝ նպատակ հետապնդելով առավելագույնս երաշխավորել երեխայի անվտանգությունը, ինչպես նաև նրա առաջնահերթ կարիքների բավարարումն ու խնամքը: Երեխայի լավագույն շահը որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքով, հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ երեխայի տարիքը, նրա հասունության մակարդակը, մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համա-

պատասխան խնամքի հնարավորությունը, ծնողների ներկայությունը կամ բացակայությունը, նրանց հետ հուզական կապը, երեխայի զարգացման համար ծնողի/ների, ընտանիքի անդամների հետ անվտանգ պայմաններում շփվելու կարևորությունը, երեխայի սոցիալական շփումը (դպրոց, ընկերներ, մասնակցություն մշակութային կյանքին, սոցիալ մշակութային խմբակներին և այլն), ինչպես նաև երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր, կրոնական կապերը:

ԵՐԵԽԱՅԻ ՊՈՌՆԿՈՒԹՅՈՒՆ — Երեխային սեքսուալ բնույթի գործողությունների համար օգտագործելն է վարձատրության, այլ հատուցման կամ դրանց խոստման դիմաց՝ անկախ այդ վարձատրությունը, այլ հատուցումը կամ խոստումը երեխային կամ երրորդ անձին տրամադրելու հանգամանքից:

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԶՈՀԱԿԱՆԱՑՈՒՄ — Հանցագործության ուղղակի հետևանք չհանդիսացող զոհականացումն է, որը պայմանավորված է տուժողի հետ աշխատող մարմինների և կառույցների ներկայացուցիչների կողմից տուժողի նկատմամբ ցուցաբերված՝ երեխաների նկատմամբ ոչ զգայուն մոտեցմամբ:

Է

ԷՄՊԱԹԻԱ — Մեկ այլ անձի հոգեվիճակն ընկալելու, նրան ապրումակցելու ընդունակությունն է:

Ը

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ — Օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքն է, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև:

Խ

ԽՄԲԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱ — Հոգեբանական աջակցության ծրագիր է, որի պայմաններից մեկն այն է, որ նման աջակցությունը տրամադրվում է ոչ թե մեկ անձի առանձնացված ձևով, այլ 6-ից 12 հոգուց բաղկացած խմբի շրջանակներում: Սրա առավելությունն այն է, որ ընդհանուր խնդիրներ ունեցող խմբի անդամները կարողանում են նման աջակցություն ստանալ ոչ միայն հոգեբանից, այլև միմյանցից:

Կ

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — Սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում է, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը:

ԿՐԿՆԱԿԻ ՁՈՀԱԿԱՆԱՑՈՒՄ (ՎԻԿՏԻՄԻԶԱՑԻԱ) — Բացասական հետևանքների ամբողջություն է, որը սեռական կամ ընտանիքում բռնության զոհը կրում է քրեական արդարադատության համակարգի հետ շփումներում:

Հ

ՀԱԿԱԿՇՌՈՂ ԲԱՎԱՐԱՐ ԳՈՐԾՈՆՆԵՐ — Հակընդդեմ հարցման իրավունքի բացակայությունը հակակշռելու համար ձեռնարկված դատավարական միջոցներն են:

ՀԱԿԸՆԴԴԵՄ ՀԱՐՑՄԱՆ (ԿՈՆՖՐՈՆՏԱՑԻԱՅԻ) ԻՐԱՎՈՒՆՔ — Իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունքն է:

ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ — Օրենքով սահմանված պայմանների առկայության դեպքում քրեական հետապնդումից հրաժարվելու հնարավորությունն է:

ՀԱՆՑԱՆՔԻ ԼԱՏԵՆՏԱՅՆՈՒԹՅՈՒՆ — Հանցավորության պաշտոնական վիճակագրության մեջ հանցագործության՝ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոնների հետևանքով արտացոլում չգտնելն է:

ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼ — Խափանման միջոց է, որի շրջանակում անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի վրա, որտեղ նա պահվում է, պարտականություն է դրվում ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը:

Մ

ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔ — Հանցագործությունից ենթադրաբար տուժած անձի բողոքի հիման վրա իրականացվող քրեական հետապնդումն է:

ՄԻԱԿ ԿԱՄ ՎՃՌՈՐՈՇ ՑՈՒՑՄՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔ — Հանցանք կատարած անձի դատապարտումն է բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքների հիման վրա, որոնց անձը չի կարողացել հարցաքննել դատավարության փուլերից որևէ մեկում:

Շ

ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ — Այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերն են, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԻԾ — Տվյալ հասարակության մեջ ընդունված նորմերին հակասող վարքագիծ է:

Պ

ՊԱՏՇԱՃ ՁԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ — Անհատների միջև հարաբերություններում որոշակի միջոցներ ձեռնարկելու պետության պոզիտիվ պարտականությունն է՝ ուղղված մասնավոր անձանց կողմից բռնությունից պաշտպանությանը:

ՊԵԿԻՆՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ — ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններն անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ, որոնք ընդունվել են ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1985թ.-ի նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով:

ՊՐՈԲԱՑԻԱ — Սոցիալ-հոգեբանական ծառայությունների համակարգ է՝ ուղղված հանցանք կատարած անձի վերաինտեգրմանը, վերասոցիալականացմանը, նրա կողմից նոր հանցանքների կանխմանը, ինչպես նաև հանրային անվտանգության ապահովմանը: Այն իրականացվում է հանցանք կատարած անձի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների կիրառման, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի կրու-

մից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու ընթացքում հսկողություն, ուղղորդում և աջակցություն իրականացնելու միջոցով:

Ռ

ՌԵՍՏԻՏՈՒՑԻԱ — Մինչ միջամտությունը եղած գույքային, իրավական վիճակի վերականգնումն է:

Ս

ՍԵՌԱԿԱՆ ԿԱՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԻԴԵԱԼԱԿԱՆ ԶՈՀ — Նախասահմանված հատկանիշներ են առ այն, թե ինչպիսին պետք է լինի կամ ինչ վարքագիծ պետք է դրսևորի սեռական կամ գենդերային բռնության իրական զոհը:

ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ — Երեխայի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններն են՝ վերջինիս խոցելիությունը, կախյալությունը կամ վստահությունն օգտագործելով:

ՍԵՌԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ — Մեկ անձի կողմից մյուսի նկատմամբ սեքսուալ ոտնձգությունն է՝ բռնություն գործադրելով կամ սպառնալիքով:

Վ

ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ — Միջոցառումների համալիր է՝ ուղղված անձի խաթարված կամ կորցրած հասարակական կապերի և հարաբերությունների վերականգն-

մանը, ինչը թույլ է տալիս նրան առանց կոնֆլիկտների ապրել սոցիալական միջավայրում և հարաբերվել այլ անձանց հետ, զերծ մնալ հանցավոր վարքագծի դրսևորումից:

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ — Պետական կամ հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրեր են (օրինակ՝ կրթական ծրագրեր, հոգեբանական աջակցության ծրագրեր)՝ ուղղված իրավախախտում կատարած անձի վերասոցիալականացմանը, վերաինտեգրմանը, դրական ներանձնային փոփոխությունների խթանմանը, ինչն էլ կնվազեցնի հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ — Իրավական, կազմակերպական և սոցիալ-հոգեբանական միջոցառումների իրականացման գործընթաց է՝ ուղղված իրավախախտում կատարած անձի արժեքային կողմնորոշումների, վարքագծի նորմերի, մոդելների՝ հասարակության կողմից ընդունելի տարբերակների վերափոխմանը:

ՎԻՃԱԿԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ — Վիճակ է, որում հայտնված անձը չունի իր համար ընդունելի այլընտրանք, քան ենթարկվել իր նկատմամբ կատարվող չարաշահմանը:

Փ

ՓԱԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ — Հանրության ազատ ելումուտը սահմանափակող, որոշակի կատեգորիայի անձանց մեկուսացված պայմաններում պահելու համար նախատեսված հաստատություն է, ինչպիսիք են, օրինակ, քրեակատարողական հիմնարկները, մանկատները, գիշերօթիկ դպրոցները, հոգեբուժարանները:

Օ

ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ — Ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուներն են, որոնք քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում են դատավարության համապատասխան անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական շահերը: